ՆԱԻՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

DOI:10.57155/NIWW5233

ՄԵՐԶԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Ամուսնաընտանեկան հարաբերություններ, մերձամուսնություն, 19-րդ դար, կանոնական իրավունք, սովորութային իրավունք, աշխարհիկ օրենքներ, արյունակցական, խնամիական, կնքահայրական, չհասություն*[1]*:*

1. Պատմական ակնարկ

Ամուսնությունը տղամարդու և կնոջ պատմականորեն ձևավորված հարաբերությունների ձև է, որի գլխավոր նպատակը ընտանիք ստեղծելն է, իսկ ընտանիքը հասարակության հիմքն է: Այս պատճառով Հայաստանում, ինչպես նաև քրիստոնեություն ընդունած շատ երկրներում, ամուսնությունը միշտ ունեցել է սրբազան խորհուրդ:

Դեռ հնուց աշխարհի քրիստոնյա երկրներում ամուսնական հարաբերությունները կարգավորվում էին կանոնական իրավունքով և դարեր ի վեր առավելապես գտնվում էին եկեղեցու իրավասության տակ: Սակայն 16-րդ դարից սկսած Եվրոպայում կրոնական տարբեր ուղղությունների միջև անհաշտ պայքարն ու փոխադարձ արգելքները հանգեցրին նրան, որ սկսեցին տուժել ամուսնացողների շահերը, ժառանգական և այլ իրավունքներ: Այս պայմաններում հետզհետե սկսեց ներդրվել քաղաքացիական ամուսնության ինստիտուտը և պետական պաշտոնյայի կողմից ամուսնության գրանցումը մետրիկական մատ-

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, nairamartirosian7@gmail.com, կրտսեր գիտաշխատող, հոդվածը ստանալու օրը՝ 17 սեպտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 14 նոյեմբերի, 2025:

[1] «Չհասություն»՝ մերձավոր ազգակցության պատճառով ամուսնության անթույլատրելիություն (գործածվում է Արարատյան և Ղարաբաղի բարբառներում): Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հ.4, Երևան, 2007, էջ 418, նաև՝ **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան,* հ. 2, Երևան, 1976, էջ 1162, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* հ. 4, Երևան, 1969, էջ 138:

յաններում։ Արդեն 18-րդ դարավերջից Եվրոպայում ամուսնության գրանցումը սկսեց ընդունվել բացառապես որպես քաղաքացիական ակտ և փորձ արվեց առանձնանալ եկեղեցու կանոնական իրավունքից։ Ամուսնական հարաբերությունների նկատմամբ սկսեցին կիրառվել քաղաքացիական օրենսդրության նորմերը[2]։

Հայերի մոտ պետության երկարատև չգոյության պայմաններում եկեղեցին դեռ վաղ շրջանից իր ձեռքն առավ ամուսնաընտանեկան հարաբերությունների ընթացքը և իր սեփական դրոշմը դրեց ամուսնական ինստիտուտի կանոնակարգման վրա։ Այդ նույն պատճառով մեզ մոտ ավելի երկար, քան մյուս երկրներում, օրինական պսակը համարվում էր եկեղեցով կատարվածն ու գրանցվածը։ Դեռ 19-րդ դարում կանոնագետ Վ. Բաստամյանցը երկմտում էր, թե երբևէ «մեր պետությունը նման ուրիշ պետություններին սահմանո՞ւմ էր արդեօք աշխարհական օրէնքներ յատկապէս ամուսնութեան մասին, թէ՞ ընդունում էր եկեղեցական կանոնները առանց ընդդիմութեան»[3]։ Սակայն մի փաստ ևս անժխտելի է՝ միջնադարյան Հայաստանում իրավունքի կարևոր աղբյուր է եղել սովորութային իրավունքը, որով էլ կարգավորվել են հասարակական հարաբերությունների շատ կողմեր։ Հայ ժողովրդի կենցաղում դրանց դերն այնքան ուժեղ ու արմատացած է եղել, որ մինչև 19-րդ դարավերջ պահպանվել են նահապետական կյանքի և հասարակական-ընտանեկան սովորույթներում։ Եվ չնայած պետության հետագա օրենսդրական գործողություններին, պահպանել են իրենց գոյությունը գործող օրենքին կից այն աստիճան, որ հաճախ հստակ սահման չի գծվել օրենքի և սովորույթի միջև։

Մեր քննառվող ժամանակահատվածում հայ հասարակության ներսում սերտորեն զուգակցված էին երկու կարգավորող համակարգեր՝ եկեղեցական-կանոնական իրավունքը և ժողովրդական-սովորութային իրավունքը։ Ամուսնական հարաբերությունների դեպքում այդ հակադրությունը դառնում էր առավել արտահայտիչ։ Եկեղեցին ամեն կերպ փորձում էր ընդունված եկեղեցական կանոնների գերակայություն սահմանել։ Եվ այս հարթությունում եկեղեցական հայրերի կողմից վերաշարադրվում և միօրինակության էին բերվում ամուսնության կանոնակարգման մասին Հայ Առաքելական եկեղեցում գործող օրենքները։ Այսպես, 19-րդ դարավերջին Արիստակես եպս. Սեդրակյանը պսակի հրահանգիչ կանոններ էր սահմանում այս կերպ. ամուսնությունը պետք է կայանա

---

2 **Տ. Դավթյան**, «Ամուսնության էության վերաբերյալ հայեցակարգեր», *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու*, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 229, http://www.old.ysu.am/files/17TD.pdf *(մուտք՝ 16.01.25 թ.)*:

3 **Վ. վրդ. Բաստամեանց**, *Կանոնագիտական երկեր*, Ս. Էջմիածին, 2015, էջ 247:

տղամարդու և կնոջ միջև՝ անպայման փոխադարձ համաձայնությամբ ու օրենքով թույլատրելի տարիքում, նաև՝ «ամուսնությունը օրհնելու և օրինական ճանաչելու համար պէտք է զգուշանան և հեռու մնան ազգակցութեան կամ արիւնակցութեան մերձաւոր աստիճաններից»[4]: Իսկ Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը պսակադրող քահանայի կողմից պարտադիր ճշգրտման համար սահմանում է հետևյալ կետերը՝ ամուսնացողների ազատ կամարտահայտումն ու նրանց ծնողների փոխհամաձայնությունը, ամուսնական չափահաս հասակի հաստատումը, ամուսնացողներից և ոչ մեկի այլ պսակով կապված չլինելը, կուսակրոն, այլադավան կամ այլակրոն չլինելը, նաև՝ «եթէ չկայ ազգակցական, խնամական եւ կնքահայրական չհասութիւն»[5]:

Տեսնում ենք, որ նշանադրությունից և պսակադրությունից առաջ, ի թիվս բազմաթիվ այլ ճշգրտումների, պսակադրող քահանան պարտավոր էր նաև պարզել, թե ամուսնանալ պատրաստվողները ազգակցական կամ արյունակցական աստիճանով համապատասխանո՞ւմ են՝ օրենքով սահմանված կարգով, ապա միայն որոշել՝ ամուսնությունը թույլատրե՞լ, թե ոչ: Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես ԺԱ Զամաշրճյանի (1800-1801, 1802-1813) 1811 թ. հրապարակած «Կանոնական Կոնդակ հարսանեաց»-ի առաջին կետով նույնպես սահմանվում էր. «Նախ՝ քահանայք քննեսցեն զհասն և զչհասն ըստ սրբազան կանոնաց»[6]: Նաև 1840 թ. Սինոդի հրամանը՝ «Յօդուած 13ՐԴ. արգելեալ լինի մտանել յամուսնութիւն յաստիճանի ազգականութեան, որ եկեղեցական օրինօք բանադրեալ է», պսակադրությանը ներկա գտնվողներն էլ պետք է փաստեին «չհասության» բացակայությունը[7]:

Ըստ կանոնի՝ եկեղեցում պսակի օրհնությանը նախորդում էր նշանօրհնեքը, որը սկսվում է «Խրատ»-ով: Ըստ էության դա եկեղեցու կողմից կատարվող կրոնաբարոյական և եկեղեցական-կանոնական օրենքի հաստատում էր, որի կատարողը հոգևորականն էր: Հայկական ծիսարանի պահանջով քահանան նախապես պետք է պարզի, որ հարսն ու փեսան միմյանց «հոգևոր և մարմնավոր» ազգակից չլինեն: Այսինքն, նախ պետք էր քննել, ստուգել, որից հետո միայն քահանայի թույլտվությամբ կկատարվեր պսակի օրհնության կարգը:

---

4 **Ա. եպս. Սեդրակեան,** *Ամուսնական խնդիրներ*, Մոսկվա, տպ. Մ. Բարխուդարեանի, 1891, էջ 27:

5 **Ն. վրդ. Մելիք-Թանգեան**, *Հայոց եկեղեցական իրավունքը*, Ս. Էջմիածին, 2011, էջ 807:

6 *Կանոնական կոնդակ հարսանեաց*, Կոստանդնուպոլիս, տպ. Սբ. Աստուածածնի, 1811, էջ 6: http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/armbook/books/kanonakan_kondak1811.pdf, *(մուտք՝ 06.03.25 թ.)*:

7 Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 807, էջ 1ա-2ա:

Այսպիսով, վերոնշյալից պարզ է դառնում, որ պսակը կարող է կայանալ այն ժամանակ, երբ չկան ազգակցական, այն է՝ ***արյունակցական, խնամիական*** *կամ* ***կնքահայրական*** *մերձավոր կապեր։*

2. Կանոնն ու սովորույթը արյունակցական մերձամուսնություններում

Դեռևս հնուց եղել է ***արյունակցական*** *սահմանված որոշ աստիճան, որը պետք էր հաշվի առնել և պահել՝ առողջ սերունդ ունենալու նպատակով։ Սակայն ամուսնության համար եկեղեցու հաստատած ազգակցական աստիճանի նորմերը ոչ մի դարում կայուն, անփոփոխ չեն եղել։ Պսակների աստիճանների մերձավորության և հեռավորության կարգը ի սկզբանե եկեղեցին վերցրեց Մովսիսական օրենքից, այն է՝ արգելվում էր պսակը արյունակցական մինչև չորրորդ աստիճանը և խնամիական երկրորդ աստիճանը։ Հայոց մեջ այս մասին առաջին վճիռը կայացրեց Աշտիշատի ժողովի ժամանակ Ներսես Մեծը (353-373 թթ.)՝ արգելելով մերձավոր ամուսնությունները, սակայն չնշելով աստիճանները[8]։ Շահապիվանի ժողովի 13-րդ կանոնը չորրորդ աստիճանի ամուսնությունը համարում էր ապօրինի և սահմանում խիստ պատիժներ։ Իսկ Դվինի 554 թ. ժողովի 22-րդ կանոնը արգելում էր ամուսնանալ մինչև հինգերորդ աստիճանը[9]։ 8-րդ դարում կայացած Պարտավի ժողովի 16-րդ կանոնն արգելում էր 4-րդ զարմի պսակը[10]։ Մխիթար Գոշը «Դատաստանագրքի» ՄԺԳ (213) գլխում ընդունելի է համարում միայն չորրորդ կամ հինգերորդ զարմից ամուսնությունը. «մի՛ ոք արասցէ խնամութիւն մինչեւ ի չորրորդ եւ ի հինգերորդ զարմն»[11]։ Սակայն արդեն 12-րդ դարում Ներսես Դ Շնորհալին (1166-1173 թթ.) որոշեց, որ ազգականների միջև պսակ կարելի է միայն ութերորդ աստիճանը լրանալուց հետո[12]։ Ն. Մելիք-Թանգյանը գրում է. «Վերջնական ժողովական կարգադրութիւն այդ մասին մեր մէջ եղաւ 1243-46-ի Սսի ժողովում, որի 7-րդ կանոնն ասում է. «Զպսակն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան», այսինքն՝ արյունակցական պսակ կարելի է միմիայն 7-րդ աստիճանում. այս կանոնը դարձաւ վերջնական եւ մինչեւ այսօր տիրող կարգն է»[13]։ Սակայն 15-րդ դարում էլ դեռ Հակոբ Ղրիմեցին իր Պսակի կանոնները շարադրել է՝*

---

8 **Ն. վրդ. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 816:

9 **Վ. վրդ. Բաստամեանց**, *Կանոնագիտական երկեր*, էջ 407:

10 **Ն. վրդ. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 817:

11 **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի*, աշխատասիրությամբ՝ ***Խ. Թորոսյանի,*** Երևան, 1975, էջ 124, https://ia600509.us.archive.org/21/items/GoshGrabarDatastanagirk/Gosh_grabar_datastanagirk_text.pdf, (մուտք՝ 15.04.25 թ.):

12 **Ներսես Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական*, աշխատասիրությամբ՝ ***Է.Մ. Բաղդասարյանի***, Երևան, 1995, էջ 134-135:

13 **Ն. վրդ. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ. , էջ 818-819:

հետևելով Շնորհալու տեսակետին: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի ֆոնդի 19-րդ դարի վավերագրերից մեկում էլ Կարապետ վարդապետի[14] Կանոնական կոնդակի ընդօրինակությունն է, որում ասվում է. «Եղև Կանոնական գրութիւնս վասն ոմանց անկարգութեանց՝ համահաճութեամբ իշխանաց և քահանայից ի թվին Փրկչի 1825-ին ի Կարապետ վարդապետէս: Նախ՝ վասն ճիւղահամարութեան, զի ազգականութեաննն ինն ճիւղ լիցի»[15]: Այս տարակարծությունները հարթելու համար Խրիմյան Հայրիկը (1893-1907 թթ.) 1899 թ. Հայրապետական կոնդակով վավերացրեց 7-րդ աստիճանում թույլատրելի պսակի կանոնը, և այն վերջնական դարձավ Գևորգ Ե Սուրենյանց (1911-1930 թթ.) կաթողիկոսի հրամանով 1922 թ.: Մինչև այսօր էլ ժողովրդի մեջ պահպանված է «յոթը պորտը» քննելուց հետո միայն ամուսնանալու սովորույթը:

Օրենքը հաճախ տարբեր երկրներում արգելել է մերձամուսնությունները, բայց արգելված ազգակցական կապի աստիճանները հաշվարկվել են տարբեր կերպ: Օրինակ, 19-րդ դարի առաջին կեսին Ռուսական կայսրությունում, որը ներառում էր հայաբնակ շատ տարածքներ, արյունակցական ամուսնությունն աներկբայորեն արգելվում էր մինչև չորրորդ աստիճանը ներառյալ (ճշգրիտ ձևակերպված է Սինոդի 1810 թ. հունվարի 19-ի հրամանագրում)[16]: Սակայն հայերին առնչվող ամուսնական «հաս-չհաս» հարցերի իրավասությունը վերապահված էր հայ առաքելական եկեղեցու Հոգևոր կառավարությանը և կանոնակարգվում էր իր օրենքներով:

Եկեղեցական օրենքը բոլոր ժամանակներում հոգևորականներին իրավունք է տվել դատել անաչառ և խղճի մտոք, բայց պայմանով, որ ի չարս չգործադրվի այդ ազատությունը: Սակայն դեռ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» հանդիպում ենք այս հարցի շուրջ երկմտանքի. «Մի՛ լիցի կաշառօք կուրացեալք, որպէս զբազումս տեսանեմք, զի այնքան են վրէժխնդիր այդորիկ օրի-

---

[14] Կարծում ենք, վավերագիրը Կ. Պոլսի պատրիարք Կարապետ Գ Պալաթցու (1823-1831 թթ.) 1825 թ. և 1826 թ. երկու Կանոնական գրությունների ընդօրինակություններն են, քանի որ պատրիարքի հրավերով 1824 թ. և 1826 թ. բարձրաստիճան հոգևորականների և իշխանների մասնակցությամբ գումարվել են Ազգային ժողովներ, որտեղ հաշվի առնելով այս և այլ հարցերի առնչությամբ արտահայտվող դժգոհությունները, սահմանվել են որոշակի բարեփոխումներ: Տե՛ս **Ս. Ֆահրադյան,** «Դիտողություններ Կ. Պոլսի XIX դարի հայ պատրիարքների կնիքների մասին», *ԲՄ,* 30, Երևան, 2020, էջ 277, https://arar.sci.am/dlibra/publication/390682/edition/361384?language=hye, *(մուտք՝ 15.03.25 թ.)*:

[15] Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ, (այսուհետ՝ ՄՄ ԿԴ), թղթպ. 54, վավ. 287, էջ 1ա:

[16] **А. Завьялов,** «Брак», *Православная богословская энциклопедия*, т. 2, Петроград, 1901, с. 1039-1040.

նաց, որքան զձեռս լի առնեն կաշառօք, զորոց զդատն հատուցանելոց են»[17]: Իսկ 19-րդ դարում նույնը փաստում է Վ. Բաստամյանցը, և օրենքի անկատարությունը համարում «չհաս» ամուսնությունների կարևոր պատճառ. «Ամուսնական չհասութեան հարցը մեր մէջ դեռևս շատ թերութիւններ ունի և կարօտ է հիմնաւոր մշակութեան և որոշ ու ճիշտ կանոնների»[18]:

Այս պատճառով առաջնորդներն ու կաթողիկոսները պարբերաբար կոնդակներ ու կանոնական գրություններ են հրապարակել, որ հոգևորականներն առաջնորդվեն դրանցով և չշեղվեն օրենքից: Այսպես, Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսը (1734-1737 թթ.), սահմանելով ընդունված կանոնները, ավարտում է կոնդակն այսպես. «Եվ մի՛ արտաքս ելանիցէք ի կանոնացս, զի մի՛ ի ներքոյ նզովից Հայրապետաց մնասջիք: Կանոնացս կատարողքն և հնազանդողքն օրհնեալ լիցին յԱստուծոյ և ի մէնջ»[19]: Կ. Պոլսի Հովհաննես պատրիարքն էլ 1811 թ. հաստատելով հարսանեաց կարգին վերաբերող 29 կետերը, իր կանոնական գրության վերջնահատվածում անօրինություններ գործող քահանաներին զգուշացնում է. «Այնպիսի ճշմարիտ չիսօսող քահանայն աքսորեսցի ի քաղաքէս և յեկեղեցւոյն, զրկեսցի յամենայն քահանայական հասից և յիրաւանց»[20]: Իսկ 1824 թ. Կ. Պոլսի Կարապետ Գ Պալաթցի (1823-1831 թթ.) պատրիարքը ամուսնական կանոններին վերաբերող իր կոնդակը սկսում է այսպես. «Եղև կանոնական գրութիւնս վասն ոմանց անկարգութեանց...»[21]:

Մաշտոցյան Մատենադարանի Արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի ֆոնդում պահվում են 19-րդ դարով թվագրվող բազմաթիվ փաստաթղթեր, որ առնչվում են ամուսնաընտանեկան հարաբերություններին: Այս սկզբնաղբյուրները բացառիկ են նրանով, որ գրված լինելով ժամանակակիցների ձեռքով՝ վերհանում են ժամանակի մերձամուսնության իրական դրսևորումները, աշխարհականների՝ հասարակական-ընտանեկան սովորույթների (ավանդույթների) պահպանողական մոտեցումները, օրենքի անկատարությունը, գրված և չգրված (այն է՝ կանոնական և սովորութային) օրենքների բախման հիմնախնդիրները: Վավերագրերի նյութը նաև հաստատում է, որ հոգևորականների ձեռքով բավական շատ անօրեն պսակներ էին կատարվում: Եվ թեպետ եկեղեցին

---

17 **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի,* էջ 124:

18 **Վ. վրդ. Բաստամեանց,** *Կանոնագիտական երկեր,* էջ 412:

19 **Մ. արքեպս. Սմբատեանց Նախիջևանցի,** *Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի,* Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Սբ. Էջմիածնի, 1895, էջ 441, http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/haygirq/book/texekagir_gexarquni. pdf, *(մուտք՝ 28.03.25 թ.)*:

20 *Կանոնական կոնդակ հարսանեաց,* էջ 16-17:

21 ՄՄ ԿԴ, թղթպ. 54, վավ. 287, էջ 1ա:

միակենտրոն ու հաստատուն կանոններ էր սահմանում և փորձում դրանք անշեղորեն օգտագործել, սակայն համատարած կամայականությունների պայմաններում օրենքի որոշակիացումն ու խստացումը հասարակության մեջ դժգոհություններ էին առաջ բերում: Այսպես, 1818 թ. մի վավերագրում տեսնում ենք, թե ինչպես են Թիֆլիսի մի խումբ իշխաններ դիմում Ներսես Աշտարակեցուն, որ «չհասության» նոր ընդունված կանոնները արդեն նշանադրվածների վրա չտարածվեն, որպեսզի ընդվզումներ չսկսվեն, այլ փոխարենը այսուհետ հոգևորականներն ավելի հետևողական լինեն և անհաս նշանադրություններ չկատարեն[22]:

Ազգակցական մերձամուսնությունների խնդրի շուրջ հոգևոր առաջնորդների տարակարծությունների, հոգևորականների կամայական մոտեցումների, օրենքի անկատարության, լիարժեք և հստակ չգործելու հետևանքով, պսակադրող քահանաները կանոնով առաջնորդվելու փոխարեն կաթողիկոսին հարցում էին անում այս կամ այն պսակի թույլտվության առնչությամբ՝ մանրամասնորեն նկարագրելով ամուսնացողների արյունակցական կապերը: Այս երևույթը հանդիպում է բազմաթիվ փաստաթղթերում: Այսպես, մի անթվական փոքրածավալ վավերագրում հաս-չհասության ազգակցական բազմաբարդ խաչաձև կապեր են նկարագրված[23]: Կաթողիկոսական դիվանում պահվող ևս մի գործ պարունակում է 1846-52 թթ. տարբեր ազգակցական չհաս և ապօրինի պսակադրությունների վերաբերող 15 վավերագիր[24]: Բոլոր դեպքերում պատկան մարմինները դիմում են կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն (1843-1857 թթ.)՝ լուծելու Վրաստանի վիճակին առնչվող այս կամ այն խնդրահարույց դեպքը: Պահպանվել է նաև 1818 թ. Եփրեմ Ա Զորագեղցի (1809-1830 թթ.) կաթողիկոսի մի կնքված կոնդակ, որով հայրապետը թույլատրում և օրհնում է աղա Հարությունն Քեանտարյանի դստեր և պարոն Պողոսի որդու անհաս համարված պսակը՝ հիմք ընդունելով տեղի առաջնորդի, իշխանների և հոգևորականների երաշխավորությունը. «Որովհետև տեղւոյդ առաջնորդն և նուիրակն՝ հանդերձ իշխանօք և քահանայիւք վերահասութիւն առնելով վկայութիւնս էին մեզ, որ ի մէջ նշանադրութեան... ո՛չ գոյ չհասութիւն»[25]: Քիչ չեն նաև կոնկրետ բնակավայրերի հոգևորականների նույնանման հարցումները՝ ուղղված վիճակի առաջնորդներին: Այսպես, Գորիից տեր Ստեփան Տեր-Ստեփանյանը հարցում է անում թեմական Աշտարակեցուն երկու ամուսնությունների թույլատրելի լինելու մասին, որոնցից առաջինի դեպքում՝ երկու հարազատ եղբայրներից մեկի թոռան խորթ որդին

[22] ՄՄ ԿԴ, թղթպ. 32, վավ. 13:
[23] ՄՄ ԿԴ, թղթպ. 52, վավ. 378:
[24] ՄՄ ԿԴ, թղթպ. 125, վավ. 381:
[25] ՄՄ ԿԴ, թղթպ. 32, վավ. 145, էջ 1ա:

ուզում է ամուսնանալ մյուս եղբոր թոռան հարազատ դստեր հետ, երկրորդ դեպքում՝ եղբոր որդին և քրոջ թոռը ցանկանում են ամուսնանալ նույն մարդու երկու աղջիկների հետ[26]: Մեկ այլ վավերագիր էլ, որտեղ ընդգրկված երկու դեպքերից առաջինում քրոջ և եղբոր որդիները ցանկանում են ամուսնանալ տարբեր մայրեր ունեցող երկու քույրերից մեկի և մյուս քրոջ դստեր հետ, երկրորդում՝ կնոջ եղբայրը ցանկանում է ամուսնանալ ամուսնու քրոջ դստեր հետ[27]: Բոլոր խնդրահարույց դեպքերում սպասում են առաջնորդի հրահանգին:

Գրավոր հուշարձաններում հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ հստակ իմանալով արյունակցական չհասության մասին և անտեսելով ընդունված օրենքը՝ թույլտվության համար դիմում են առաջնորդին: Այսպես, Աստրախանից Գաբրիել Կիրակոսյան Աղիմջանովի որդի Սարգիսն ու Հովհաննես Բունիաթյանի դուստր Եղիսաբեթը ծնողների փոխհամաձայնությամբ ցանկանում են պսակվել: Կա որոշակի ազգակցական չհասություն, սակայն տեղի Բարսեղ արքեպիսկոպոսը համաձայնության համար դիմել է կաթողիկոսին: Արդեն վեց ամիս է՝ պատասխան չկա: Հիմա ծնողներն են իրենց կողմից խնդրանքով դիմում կաթողիկոսին[28]: Մեկ այլ դեպքում էլ Կարապետ վարդապետն է քահանա Պատկանյանցին նկարագրում մի արյունակցական չհասության դեպք ու հավելում, որ դիմողները դա իմանալով՝ թույլտվություն են խնդրում և սպասում պատասխանի[29]: Ամեն դեպքում Աշտարակեցին անդրադառնում է հարցումներին և կա՛մ թույլատրում է ամուսնությունը, կա՛մ հիմնավորմամբ մերժում[30]:

Սակավ չեն դեպքերը, երբ աշխարհիկ պատկան մարմինները հոգևորականների կատարած չհաս ազգակցական պսակների մասին բարձրաձայնում են և դժգոհում: Օրինակ, Երևանի Դիվանատնից գրում են Գյումրու հաջորդին[31] որ տեղի երկու քահանա առանց Հոգևոր կառավարության գիտության պսակ են կատարել: Ենթադրում են, որ չհասություն է եղել և խնդրում են ճշտել[32]: Մեկ այլ վավերագրում Ղարասուբազարի Հոգևոր կառավարությունը գրում է Տավրիկյան գավառի վերատեսուչ Գևորգ եպիսկոպոսին առ այն, որ «մեշչանոյ» Ճևահիրյան Մարտիրոսի որդի Գրիգորը նշանված է «մեշչանոյ» Խաչերես Մանուելյան Մելիքյանցի դուստր Այպիքեի հետ: Ապա թվում է ամուսնության համար երեք ազգակցական չհասության պատճառ, իսկ չորրորդը՝ «հարսնացու

[26] ՄՄ ԿԴ, թղթպ. 34, վավ. 162:
[27] ՄՄ ԿԴ, թղթպ. 34, վավ. 211:
[28] ՄՄ ԿԴ, թղթպ. 137, վավ. 203:
[29] ՄՄ ԿԴ, թղթպ. 104, վավ. 176:
[30] ՄՄ ԿԴ, թղթպ. 34, վավ. 311:
[31] Գավառական բնակավայրում առաջնորդի փոխանորդը:
[32] ՄՄ ԿԴ, թղթպ. 91, վավ. 93:

աղջիկն Այպիքէ տակաւին չև է հասեալ ի տես կատարելութեան՝ ըստ օրինացն առ ընդունել զպսակ ամուսնութեան»[33]*: Հանդիպում են նաև հակառակ դեպքեր, երբ օրինապահ մարմինների արգելանքից հետո պարզվում է, որ պսակն օրինական է: 1838 թ. Հակոբ Մատակյանը հայտնում է, որ ցանկանում է ամուսնանալ Վարդեր անունով աղջկա հետ, սակայն Երևանի Վիճակային կոնսիստորիան չի թույլատրում՝ համարելով չհաս: Համաքաղաքացիները վկայում են, որ նրանց մեջ չհասություն չկա: 1839 թ. վճիռ է կայացվում թույլատրել նշանը*[34]*:*

3. Կանոնն ու սովորույթը խնամիական և կնքահայրական մերձամուսնություններում

Պսակի կատարման մյուս անհրաժեշտ պայմանը ***խնամիական*** *և* ***կնքահայրական***[35] *չհասության բացակայությունն էր: Այս մասին եկեղեցական կանոններում որոշակի սահմանումներ չկան, կան ուղղակի անդրադարձներ: Այսպես, 5-րդ դարում Շահապիվանի ժողովի ԺԲ (12) կանոնը արգելում է առնվազն երկրորդ աստիճանի խնամիական ամուսնությունը*[36]*: 8-րդ դարում Դվինի ժողովի կանոնները արգելում են նույնիսկ 4-րդ աստիճանը՝ թույլատրելով 5-րդը*[37]*: Եկեղեցական հայրերից Հովհաննես Երզնկացին էլ է նույնը հաստատում. «Այլ աւտարքն նոյնպէս Դ (4) ծնունդ հեռանան և ապա այլ խնամենան»*[38]*: Մոտեցումը համանման է նաև Գրիգոր Տաթևացու դեպքում. «Օրինաց ազգն որ են խնամիքն... ոչ լինին խնամիք մինչ ի չորս ծնունդն»*[39]*: Սսի երկրորդ ժողովում (1243 թ.) ընդհանուր առմամբ ընդունվում էր ազգակցական 7-րդ աստիճանը և ենթադրվում էր, որ կնքահայրականն էլ յոթնաստիճան պիտի լինի: 1825 թ. Տիգրանակերտում Կարապետ վարդապետի հրապարակած Կանոնական գրության մեջ սահմանվում է՝ «խնամութեանն ութն ճիւղ և կնքահայրութեանն եօթն ճիւղ՝ ըստ հայրապետական կանոնաց հարց սրբոց նախնի առաջնորդացն մե-*

---

33 ՄՄ ԿԴ, թղթպ. 129, վավ. 237, էջ 1ա:

34 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 442:

35 Համարելով, որ մեռոնը սերտ հարաբերություններ է առաջացնում կնքահոր ու սանիկի միջև, կնքահայրությունը դիտվել է հոգևոր ազգակցություն: Հակոբ Դրիմեցին հետևյալ կերպ է մեկնաբանում կնքահայրական մերձամուսնության արգելքը. կնքահայրը հոգևոր հայր է իր սանիկների համար, սանիկները՝ հոգևոր զավակներ և միմյանց հանդեպ էլ՝ հոգևոր եղբայրներ: Հետևաբար, սանիկները, նրանց որդիները և թոռները չեն կարող միմյանց հետ ամուսնանալ: Տե՛ս **Յ. վրդ. Խրիմեցի**, *Յաղագս ազգականութեանց բաժանման*, Վենետիկ, Սբ.Ղազար, 1947, էջ 19: https://arar.sci.am/dlibra/docmetadata?showContent=true&id=359236

36 *Կանոնագիրք հայոց*, աշխատասիրությամբ՝ ***Վ. Հակոբյանի***, Երևան, 1964, էջ 445-446:

37 **Ն. վրդ. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 819:

38 **Է. Բաղդասարյան,** *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը,* Երևան, 1977, էջ 154:

39 **Ա. եպս. Սեդրակեան,** *Ամուսնական խնդիրներ,* էջ 109:

րոց»[40]: Արդեն Ներսես Աշտարակեցու՝ Սինոդին ուղղված 1851 թ. հրամանով՝ կնքահայրական թույլատրելի աստիճանը սահմանվում է երրորդը: Թեպետ 1734 թ. Հայրավանքի միաբաններին ու ժողովրդին ուղղված Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսի կոնդակում հստակ սահմանվում է. «Այլ և կանոնադրեմք և դուք հնազանդ լերուք. ազգականութեան Ժ (10) ճիւղ, խնամութեան Ե (5) ճիւղ և կնքաւորութեան Ը (8) ճիւղ, կոյս ընդ կոյսին, այրին ընդ այրոյ: Եվ մի՛ արտաքս ելանիցէք ի կանոնացս»[41], սակայն կոնդակի բնագիրը մեջբերող հեղինակը՝ Էջմիածնի միաբան Մեսրովբ Սմբատյանցը տողատակում ծանոթագրում է. «Հայրապետք եկեղեցւոյ, զիջանելով ժամանակիս պահանջին և հանգամանացն, սահմանել են թույլատրել ազգականութեան է (7) ճիւղը (պորտը), խնամութեան Ե (5) ճիւղը և կնքաւորութեան Դ (4) ճիւղը»: Ասել է, թե 1895 թ. գործող կանոնակարգն արդեն այսպիսին էր: Եվ այն վերահաստատվում է Խրիմյան Հայրիկի 1899 թ. կարգադրությամբ, որտեղ թույլատրվում էր խնամիական 5-րդ աստիճանը[42]:

Որովհետև այս օրենքները նույնպես կայուն չէին, տարընկալման ու շփոթության առիթ էին դառնում, այդ պատճառով նշանի ու պսակի կարգ կատարող հոգևորականները կոնկրետ դեպքերի համար ևս հաճախ դիմում էին թեմակալին և նույնիսկ կաթողիկոսին: Այսպիսի դեպքերի ոչ սակավ դրսևորումների ենք հանդիպում սկզբնաղբյուրներում: Օրինակ, մի վավերագրում նկարագրված է կնքահայրական կապ՝ փեսացու Դավիթի պապի եղբորորդին կնքել է հարսնացու Հռիփսիմեի հորեղբորը: Առաջնորդի թույլատվությամբ հոգևորականներ տեր Աբրահամն ու տեր Դավիթը իրավասու են պսակը կատարել[43]: Իսկ 1846 թ. Աստրախանից Սերովբե արքեպիսկոպոսը թույլատրում է պսակել Հովհան Փառակեցու որդի Աբելին Ներսես Խոճայովի դստեր հետ, քանի որ խնամիական արգելք չկա[44]: 1843 թ. մեկ այլ վավերագրում վերինգետցի տեր Հովհաննես Մալյանցը գրում է Օրդուբադի գավառի գործակալ Գալուստ Կարապետովին, որ հանդամիջեցի Սուլխանովների և տեղի Խոջամիրովների միջև արդեն խնամիական կապ կա, բայց ցանկանում են նաև երկրորդ նշանը անել: Մի տանից երկու աղջիկ նույն տուն տանելը դեմ է հայոց օրենքին, մնացածը գործակալի որոշելիքն է[45]: Հակադիր մոտեցում ենք տեսնում հաջորդ վավերագրում, որտեղ 1818 թ. Ելիզավետպոլի «հաջորդ» Հարությունը հայտնում է առաջնորդին, որ

---

40 ՄՄ ԿԴ, թղթպ. 54, վավ. 287, էջ 1ա:

41 **Մ. արքեպ. Սմբատեանց Նախիջևանցի,** *Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի*, էջ 441:

42 **Ն. վրդ. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 819:

43 ՄՄ ԿԴ, թղթպ. 52, վավ. 378բ:

44 ՄՄ ԿԴ, թղթպ. 121, վավ. 213:

45 ՄՄ ԿԴ, թղթպ. 105, վավ. 318ա,բ:

ոմն ամուրի Պողոս Հարությունյան ուզում է պսակվել իր նախկին աներորդու սանամոր հետ: Ինքն արգելել է, սակայն համայնքը պահանջում է բավարարել և որոշում է խնդրում[46]: Եվս մի դեպք, երբ Եաշ քաղաքում խնամիական գծով եռաստիճան չհաս պսակ է կատարվել Միքայել հաճի Գաբրիելովի և Խաթուն Մկրտիչովնայի միջև: Տեղի քահանա տեր Մարկոսը տեղյակ է պահել Գրիգորիուպոլի «հաջորդ» Մանվել վարդապետին, որ տեր Հովհաննեսը Փոթիշանից եկել ու գաղտնի կատարել է պսակը: Պատասխանատվության են կանչում պսակը կատարած հոգևորականին[47]:

Վավերագրերում հաճախ են դիտարկվում դեպքեր, երբ առաջնորդները, դիմող կողմի հիմնավորումները համարելով ընդունելի, թույլատրում են չհաս խնամիական և կնքահայրական պսակները: Այսպես, սղնախաբնակ Ստեփաննոս Ամիրաղյանի և այրի Բարբարե Զուրաբյանցի միջև կա երրորդ աստիճանի խնամություն, բայց տարիներ առաջ հոգևորականին 50 ռուբլի կաշառելով՝ գաղտնի պսակվել են: Ըստ օրենքի հիմա պետք է ապաշխարեն, ապա բաժանվեն և ամուսնանան ուրիշների հետ, պիտի պատժվեն պսակ կատարող քահանան, խաչեղբայրն ու վկաները, եթե տեղյակ են եղել անհասությանը: Սակայն հաշվի առնելով, որ արդեն երկու տարի ամուսնացած են, ունեն երկու երեխա, Սինոդն առաջարկում է միայն խիստ ապաշխարանքի ենթարկել և թողնել միասին ապրեն՝ բացառության կարգով: Թույլտվության համար դիմում է կաթողիկոս Աշտարակեցուն[48]:

Հայաստանի Ազգային արխիվում պահվող 1839 թ. մի գործ այն մասին է, որ ղզլարցի մահտեսի Հովսեփ Գրիգորյանի դուստրն ու պաշտոնաթող մայոր, ազնվական Սիմեոն Քանանյանը արդեն մի տարի է՝ ցանկանում են ամուսնանալ, սակայն Աստրախանի Կոնսիստորիան նրանց պսակը չի թույլատրում: Դեռ մեկ տարի առաջ Սիմեոնի եղբայր Եղիան ու աղջկա հայրը դիմել են Կոնսիստորիային՝ մեկնաբանելով, որ իրենց միջև կապը ազգակցական չէ, այլ խնամիական, իսկ երիտասարդներն էլ իրար շատ են հավանում: Քննությունը պարզել է, որ փեսացուի հորաքրոջ որդին ամուսնացած է հարսնացուի քրոջ հետ, և Կոնսիստորիան արգելում է պսակը[49]: Գործի հանգուցալուծմանը հանդիպում ենք Մատենադարանի վավերագրերից մեկում, որը Հովհաննես Ը Կարբեցու (1831-1842 թթ.) գրությունն է Աստրախանի թեմական Սերովբե արքեպիսկոպոսին, որով հրահանգում է բացառության կարգով թույլատրել պսակը՝ հաշվի առնելով այս

[46] ՄՄ ԿԴ, թղթպ. 32, վավ. 188, էջ 17ա:
[47] ՄՄ ԿԴ, թղթպ. 19, վավ. 159:
[48] ՄՄ ԿԴ, թղթպ. 125, վավ. 381 էջ 16ա-18ա:
[49] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 423:

երկու տների ներդրումը «յօգուտ տէրութեան ու եկեղեցւոյն, նոյնպէս յարգելով և զայնոսիկ հանգամանս, զի՝ ա) յիշեալ Քանանովն շարժեալ ի սէր մաքուր առ օրիորդն վերտառեալ, որովհետև ընտանեցեալ է տանն Երուսաղեմացւոյ, առանց իրիք կասկածանաց յառաջասցին անտի զանազան անօգուտ վարկք կարծեաց ի վնաս երկուց ականաւոր և բարեպաշտօն տանցն այնոցիկ ի Ղզլար, և բ) ...»՝[50] հիշյալ օրիորդի քույրը, որի միջոցով էր խնամիական կապը, մահացած է: Բայց նաև հորդորում է աշխարհիկ մեծ տոնախմբություն չանել, պսակադրել միայն երկու-երեք վկայի ներկայությամբ:

Նույնանման խնդրի ենք հանդիպում նաև Թելավի 1826 թ. մեկ այլ վավերագրում: Տուրիսցիխեցի տեր Հովհանի եղբոր մահից հետո կինն ամուսնացել է, որբ դստերը պահել է ազգությամբ վրացի կնքահայր իշխան Գիորգի Ավալովը: Հիմա Գիորգիի քույրը աղջկան նշանել է իր որդի Սուլթանյան Սոլոմանի հետ և չի պատրաստվում նշանը չեղյալ հայտարարել: Նույնիսկ պատրաստ է վրաց եկեղեցով պսակել, եթե հայ եկեղեցին չթույլատրի, քանի որ «տղայն և աղջիկն ամենայն ժամ ցայկ և գիշեր ի միասին են, իբրև պսակեալք, և ասեն ոմանք, թէ իբր յղի իցէ աղջիկն»[51]:

Վերոգրյալ փաստերը հաստատելու և վավերացնելու համար քննենք Մատենադարանի Արխիվում պահվող ևս տասնյակից ավել վավերագրերի նյութեր, որոնք առնչվում են անմիջապես մերձամուսնությունների թեմային: Այսպես, Տփխիսից Եփրեմ վարդապետը Շամախիի և Շամշադինի «հաջորդ» Վարդան վարդապետին ուղղված 1842 թ. գրության մեջ հաստատում է, որ ինքն էլ է լսել ոմն տեր Ստեփանի կատարած բազմաթիվ չհաս պսակների մասին և ուղարկում է այս գործերի արդիվեցի, ուզունլարցի և կողբացի տասից ավելի վկաների անուններ: Ապա հավելում. «Եւ խնդիրք իմ. իմ կամք քոյ է առաջել կամ անտես առնել վասն նորա, միայն թէ որպէս կամիք պատժեցէք զնա»[52]: Կաթողիկոսական դիվանի մի վավերագրում էլ հանդիպում ենք ճյուղագրությամբ ներկայացված 1828-30 թթ. չհաս պսակների տասներկու դեպք, երբ Շամախիի վիճակի հոգևորականները բավականին մեծ գումարների դիմաց անօրեն պսակներ են կատարել[53]:

Մեկ այլ դեպքում Նուխու (Շաքի) քաղաքացի Զաքարիայ Մկրտումյան Խանջալովը 1849 թ. գրում է կաթողիկոս Ն. Աշտարակեցուն, որ համաքաղաքացիներ Ավետիս Կարապետյանի և Մելիք Մանուկյանի նշանադրությունները երկու

[50] ՄՄ ԿԴ, թղթպ. 99, վավ. 61, էջ 1բ:
[51] ՄՄ ԿԴ, թղթպ. 53, վավ. 164, էջ 1բ:
[52] ՄՄ ԿԴ, թղթպ. 102, վավ. 96, էջ 1ա:
[53] ՄՄ ԿԴ, թղթպ. 64, վավ. 549ա, բ:

աղջիկների հետ կասկածահարույց էին՝ «երկոցունց գտանեցեալ հոգևոր և մերձաւոր ազգականութեան պարագայից»[54]*: Սակայն իր բարեխոսության արդյունքում տեղի՝ Ղարաբաղի մետրոպոլիտ Բաղտասար Հասան-Ջալալյանը թույլատրել է ամուսնությունը, բայց հոգևոր գործերի վերահասու Սարգիս վարդապետ Ջալալյանը եկել և արգելել է՝ հիմնավորելով ազգակցական չհասությամբ: Խնդրում է կաթողիկոսի աջակցությունը: Միջնորդի միջոցով հարցը լուծելու դեպք է հանդիպում նաև մեկ այլ վավերագրում: Թիֆլիսից Եփրեմ վարդապետ Մարգարյանը 1842 թ. գրում է Սև քար գյուղի հոգևորականներին, որ Խառատյանց Սահակի և Զպուկի դստեր միջև չհասությունը ինքը լուծված է համարում՝ «զայն ես ընծայեցի պրն Մկրտչի և պրն Կիրակոսի միջնորդացն»*[55]*, և նրանք կարող են անարգել պսակվել:*

Եվս մեկ շատ ուշագրավ վավերագիր՝ գրված 1851 թ. Բեսարաբիայի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսին՝ Հովհաննես և Խաչատուր Լազարյանների անունից: Նրանք թույլտվություն են խնդրում Խաչատուրի դուստրեր Աննային և Եղիսաբեթին ամուսնացնելու իրենց երկու քրոջորդիներ Իվան Դավիթիչ Տելեանովի և իշխան Սիմեոն Դավթյան Աբամելիքովի հետ[56]*. «տալ յամուսնութիւն զերկոսին օրիորդ դստերս մեր՝ զԱննայն և զԵղիսաբեթն, երկուց քեռորդւոց մերոց»*[57]*: Եվ ապա մեկ տարի անց գրված ևս մի վավերագիր, որտեղ Լազարյան եղբայրները խորին շնորհակալություն են հայտնում թեմակալին թույլտվության համար և տեղեկացնում, որ տարեսկզբին երկու պսակադրությունն էլ կատարել են. «Ահա՛ եղև կատարումն այնց երկուց պսակադրութեանց, առաջինն ի 18 յունվարի սոյն ամի և երկրորդն յ30 նոյն ամսոյ»*[58]*:*

Ինչպես տեսանք, վերը բերված օրինակներում էլ հաճախ հանդիպում ենք հոգևորականների անօրեն գործողությունների՝ նույնիսկ բարձր մակարդակով: Սակայն նաև ընդունենք, որ այսպիսի դեպքերը հաճախ լուրջ հիմնավորում

---

54 ՄՄ ԿԴ, թղթպ. 147, վավ. 473, էջ 1ա:

55 ՄՄ ԿԴ, թղթպ. 102, վավ. 87, էջ 1ա:

56 Այստեղ կարևոր է նշել, որ Խաչատուր Լազարյանը դուստրերին իր քույրեր Մարիամի և Մարթայի որդիների հետ ամուսնացնելու խնդրանքով նախապես դիմում է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին: Վերջինս կտրականապես մերժում է՝ հիմնավորելով, որ այս դեպքում չորրորդ աստիճանի արյունակցական կապ կա, ինչն անընդունելի է օրենքով, իսկ «օրէնքը սահմանուած է առանց բացառութեան բոլորի համար, լինին հարուստ թէ աղքատ»: Իշխանը միջնորդների միջոցով խոստումներ տալով՝ փորձում է ստանալ կաթողիկոսի համաձայնությունը, սակայն վերջինս անդրդվելի էր: Այս դեպքից հետո Լազարյանը թշնամանում է Աշտարակեցու հետ և ամեն կերպ փորձում նրան խանգարել իր ձեռնարկումներում: (Տե՛ս **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, *Ազգապատում,* հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4450-4451)

57 ՄՄ Երիցյանների ֆ., թղթպ. 152, վավ. 33, էջ 2ա:

58 ՄՄ Երիցյանների ֆ., թղթպ. 152, վավ. 35, էջ 1ա:

ունեին։ Առաջնորդներն այսպես էին վարվում, երբ արգելքի դեպքում ամուսնացող կողմերը սպառնում էին դավանափոխ, անգամ կրոնափոխ լինել, երբ արգելված պսակի համար դիմողները ազգային կյանքում ազդեցիկ մարդիկ էին կամ երբ հայերով սակավ բնակեցված որոշ տարածքներում հայերի՝ այլազգու կամ այլակրոնի հետ ամուսնանալու վտանգ կար։ Այսպիսի դեպքերում եկեղեցին զիջում էր և անտեսում ազգակցական թույլատրված աստիճանակարգը։ Այսպես, 1847 թ. Բարսեղ արքեպիսկոպոսը Աստրախանից դիմում է կաթողիկոսին՝ տեղի երկու երևելի գերդաստանների զավակների ամուսնության թույլտվության համար[59]։ Երիտասարդները՝ Հովհաննես Մելիքենցովի դուստր Եղիսաբեթը և Սարգիս Աղամջանյանը, երկու ոչ հարազատ քույրերի թոռներ են։ Եվ թեմակալը, ընդունելով հանդերձ մերձավոր ազգականների միջև ամուսնության արգելքի արդարացիությունը, բերում է պսակը թույլատրելու հիմնավոր փաստարկ. «տղայն և հարսնացուն են ականաւորք և ունին զբազում երևելի ընտանիս և մերձաւորս, զորս արժան է շահել և բաւականացուցանել»[60]։ Սակայն վերջնական աներկբա որոշումը առաջնորդինն է։

Մեկ այլ վավերագրում Միքայել Սարաջյանցը 1844 թ. Տփխիսից գրում է կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն, որ իր հորաքրոջ որդի բոդբիսխևցի Գևորգ Սիսոյանի դուստրը և վելիսցիխեցի Ասլանը արդեն երեք տարի է նշանված են և «ունին ի միջի իւրեանց զխնամական երթևեկութիւն և փեսայն յարակցութիւն ընդ տան անրոյ»[61]։ Սակայն վիճակի Կարապետ արքեպիսկոպոսը պսակը արգելել է «եօթնապորտեան խնամական չհասութեան»[62] պատճառով և Սինոդին էլ գրել, որ լուծարեն նշանը։ Խնդրում է վերանայել որոշումը՝ զգուշանալով, «որ այս մերձակայ ազգականն իմ, գոլով ռամիկ և փոքրոգի, զի մի՛ ի հուսահատութիւնէ վրիպեսցի ի շաւղաց՝ յամօթ ողջոյն ազգականացս»[63]՝ հավելելով, որ ավելի անընդունելի չհաս պսակներ էլ են թույլատրվել։ Հիմնավորում է նաև այն հանգամանքով, որ տեղում վերաբնակված վրացիների մեջ հայ ընտանիքները սակավաթիվ են և դժվարությամբ են պահպանում իրենց հավատքը։ Եկեղեցին համանման խնդրի էր բախվում նաև այլ տարածաշրջաններում։ Նույն ժամանակաշրջանին վերաբերող Կաթողիկոսական դիվանի մեկ ուրիշ վավերագրում քահանա Հովհաննես Խոսրովյանը օրինակներով գրում է Աստրախանի Կոնսիստորիային, որ չերքեզահայերի մեջ արյունակցական չհաս ամուսնությունները շատ

---

59 ՄՄ ԿԴ, թղթպ. 130, վավ. 361։
60 Նույն տեղում, էջ 1բ։
61 ՄՄ ԿԴ, թղթպ. 111, վավ. 378, էջ 1բ։
62 Նույն տեղում։
63 Նույն տեղում։

են, և եթե իրենք արգելում են պսակը, հայերն էլ չերքեզների նման փախցնում են աղջկան, ապրում միասին, երեխաներ ունենում: «Եթէ բան ինչ ասեմք, հեթանոսաց մեջ են և յօժար՝ վասն կնոջ թողուլ զհաւատս և գնալ ի կրօնս հեթանոսաց: Խնդրեմ մին ճանապարհ և դուռն տալ»[64]:

Մի մերձամուսնության հիմնահարցի է բախվում նաև Աստրախանի վիճակի Բարսեղ արքեպիսկոպոսը: 1848 թ. Ղզլարից նրան է գրում Գրիգոր Արեշովը առ այն, որ ցանկանում է ամուսնանալ հանգուցյալ Սիմեոն Բայենդուրովի դուստր Մարիամի հետ, սակայն տեղի Հոգևոր կառավարությունը խնամիական բարեկամությունը պատճառ բերելով՝ հորդորում է դիմել Աստրախանի Ազգային կոնսիստորիային: Նկարագրում է իրենց խնամիական կապը, այն է՝ իր հորաքույր Աննայի թոռը ամուսնացել է Բայանդուրովի մի դստեր հետ, և հիմա ինքն է ցանկանում ամուսնանալ մյուսի հետ: Խնդրում է իր միջամտությամբ նպաստել թույլտվություն ստանալուն[65]: Մի քանի օր անց նույն հայցով բարձր սրբազնությանն է դիմում Ղզլարի «կոմենդանտ» (պարետ) Կալուգինը և խնդրում իր մտերիմ Գրիգորի Վառլամովիչ Արեշևի անունից բարեխոսել Աստրախանի Հոգևոր կառավարությանը՝ չձգձգել և իր հրամանով արագացնել ամուսնության թույլտվությունը[66]: Ապա Ղզլարից հոգևորականներն են գրում սրբազանին, որ իր մերժումը բուռն բացասական արձագանք է առաջացրել տեղում. «Տեղւոյս պարոն կոմենդանդն, ի պատճառս ազնուականն Գրիգորի Վարդանեան Արէշովայ, ի վերա առ ի ձէնջ նորընկալեալ բացասական պատասխանոյն գտանի ըստ չափս անբաւական: Շփոթ մեծ յարուցեալ է ի յիշեալ Արեշովն և ի նորայսն: Որով և շշունջ ծանր տեսանի ի շրթունս բազմաց»[67]: Խորհուրդ են տալիս թույլատրել՝ խուսափելու համար «զապագայ անախորժ հետևանաց»[68]: Զուգահեռաբար Ղզլարից Բարսեղ արքեպիսկոպոսին է դիմում դպիր Խաչատուր Մելիքովը: Գրում է, որ Գրիգոր Արեշովը վրդովված է մերժումից, ցանկանում է դավանափոխ լինել և պսակվել ռուսական եկեղեցով: Աղջկա մայրը համակարծիք է: Քաղաքի երևելիներն էլ են դեմ արքեպիսկոպոսի որոշմանը, դժգոհություն է հասունանում. «Սհաթից սըհադ խռովութիւնն և տառաձայնութիւնն հավելանումայ և շատ տեսակ չար խորհրթեանեն, չէմ համարցակում բոլորն հայդնել: Թէպետ վաղ տեղս անբաւականութիւն կամ զուր խոսվացութիւն իլէլայ, ապայ այսպիսի բան չի իլէլ»[69]: Խորհուրդ է տալիս թույլատրել ամուսնությունը, այլապես՝

---

64 Նույն տեղում, էջ 2ա:
65 ՄՄ ԿԴ, թղթպ. 137, վավ. 6:
66 ՄՄ ԿԴ, թղթպ. 137, վավ. 37:
67 ՄՄ ԿԴ, թղթպ. 137, վավ. 53ա, բ, էջ 1ա:
68 Նույն տեղում:
69 ՄՄ ԿԴ, թղթպ. 137, վավ. 54, էջ 1բ:

«զորինչևզորինչ յառաջանայ և ծագի մեծ խռովութիւն, եթէ անբաւական մնամք, յայնժամ մենք անբարդ եմք»[70]։ Ընդամենը մի քանի օր անց Բարսեղ արքեպիսկոպոսը տեղեկացնում է կաթողիկոսին, որ վերոնշյալ պսակի վերաբերյալ հասարակությունը և պարետը դժգոհության մեծ ալիք են բարձրացրել, ինչի հետևանքով ինքը ստիպված է եղել հրահանգել Հոգևոր կառավարությանը՝ թույլատրել ամուսնությունը։ Խնդրում է ավելի ու ավելի հաճախ կրկնվող այսպիսի անախորժ դեպքերի համար լուծում գտնել. «Աղաչեմ զգերընտիր հայրապետութեանդ դարձուցանել զքաղցր ակնարկութիւն ձեր ի վերա այսպիսի դրութեան հոգևորական կառավարութեան վիճակիս և պաշտպանութիւն ընդդէմ անախորժ և անուղիղ անբաւականութեան և խռովութեան ժողովրդոց, որք առաւելապէս ծագին ի դէպս պսակաց»[71]։

Արյունակցական մերձամուսնության համար համաքաղաքացիների միջնորդության մեկ այլ հետաքրքրական դեպք. 1846 թ. Քիշինևից քահանա Հարություն Սանվելյանը գրում է, որ գրիգորիուպոլցի Հակոբ Մալխասյանին և իր հորաքրոջ աղջիկ Հռիփսիմեին ցանկանում են պսակել։ Օդեսայից Ալեքսեյ Սերգեյիչ Սիմոնովն ու էլի ուրիշ հայազգի երևելիներ միջնորդում են պսակը չարգելել, որպեսզի տեղի այլազգիներից ծածկեն ազգային անպատվությունը՝ «առ ի ծածկել զյանցանս նոցին՝ գոյացեալսն ի միջի նոցուն երկոցունց ամս իբրև տասն»[72]։ Կաթողիկոս Ն. Աշտարակեցին պատասխանում է, որ խնդրի լուծման երկու տարբերակ կա՝ 1. պսակվողները պետք է վեր կանգնեն մարմնական, ոչ քրիստոնեական ցանկություններից, ապա նրանցից յուրաքանչյուրը ապաշխարի և ամուսնանա այլ մարդու հետ, 2. եթե չհաղթահարեն իրենց ցանկությունները, ապա Գրիգորիուպոլի քահանային հրահանգել «առանց հրապարակական հանդիսից ընթեռնուլ ի վերա նոցա զսահմանեալսն վասն կանոնաւոր պսակաց ի տուն նոցա և ո՛չ յեկեղեցւոջ»[73]։ Օդեսայի քահանան Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային հրահանգում է գործել ըստ կաթողիկոսի հրամանի. կանչել երիտասարդներին և նրանց ընտանիքներին, բացատրել և սպասել նրանց որոշմանը։ Ցանկացած տարբերակի ընդունման դեպքում վկաների ներկայությամբ գրավոր հաստատել որոշումը և ստորագրել[74]։ Ապա Օդեսայից Հովհաննես քահանա Գրիգորյանը Կոնսիստորիային տեղեկացնում է, որ ինքը զրուցել է երիտասարդների և նրանց ընտանիքների հետ, նրանք միանշանակ ընտրել

[70] Նույն տեղում։
[71] ՄՄ ԿԴ, թղթպ. 138, վավ. 414, էջ 2բ։
[72] ՄՄ ԿԴ, թղթպ. 121, վավ. 128, էջ 1ա։
[73] ՄՄ ԿԴ, թղթպ. 121, վավ. 184ա, էջ 1ա։
[74] ՄՄ ԿԴ, թղթպ. 121, վավ. 184բ։

են երկրորդ տարբերակը՝ մեկնաբանելով. «Որովհետև ի մանկահասակ խակամտութեան մերոյ ի միասին մեղաք, ի միասին թերևս և ողորմեալ գտցուք»[75]: Զույգը պատճառաբանում է իր ընտրությունը. «Այլ ո՞ արդեօք բաց ի բարեկամէն մաքսաւորաց և մեղաւորաց կամեսցի ընդ մեզ՝ ընդ հանցաւորացս կենակցիլ ի կեանս աշխարհիս»[76]:

Վերոնշյալ բազմաթիվ օրինակներից պարզ է դառնում, որ ամուսնության հստակ կանոնակարգումն ու վերահսկողությունն անհրաժեշտություն էր: 19-րդ դարասկզբից ռուսական հպատակության տարածքներում Քաղաքացիական օրենսդրության համապատասխան հոդվածներում արդեն սահմանվում և վերասահմանվում էին ամուսնական աշխարհիկ օրենքները: Եվ եթե դեռ 19-րդ դարասկզբին հանդիպում ենք պսակադրող քահանայի կողմից արված ամուսնությունների օրինական լինելու մասին միայն ոչ պաշտոնական արձանագրությունների, ինչպես, օրինակ, 1821-23 թթ. Կաթողիկոսական դիվանի ֆոնդում Հաղբատի Ս.. Նշան վանքի տարեկան եկամուտների գրանցման մի Հաշվեմատյանին կից երեք պատառիկները[77], ապա արդեն 1845-51 թթ. կան պահպանված Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիայի կատարած պսակների վկայականների բազմաթիվ (շուրջ 130) տպագիր ձևանմուշներ, որոնց առաջին էջին Հայտարարությունն է՝ պսակվողների անունների և տարիքների նշումներով, երկրորդ էջին՝ յուրաքանչյուր կողմից վեցական վկաների ստորագրություններ առ այն, որ տվյալ ամուսնության համար չկան ո՛չ եկեղեցական, ո՛չ կայսերական օրենքների արգելքներ, ո՛չ էլ ծնողների կողմից խոչընդոտ[78]: Ասել է թե, 19-րդ դարից աշխարհիկ օրենսդրության ներմուծման հետևանքով ամուսնական օրենքի կիրառությունը սկսում է մտնել նոր փուլ և ընդունելի դառնալ հասարակության լայն շերտերի համար: Սակայն դեռևս պահպանում է սովորութական մոտեցումները:

Ամփոփում

19-րդ դարը հայ ժողովրդի պատմության մեջ յուրահատուկ ժամանակաշրջան էր՝ պայմանավորված ռուսական, օսմանյան և պարսկական տիրապետության տարբեր ազդեցություններով, հետևապես նաև՝ ազգային եկեղեցու դերի

---

75 ՄՄ ԿԴ, թղթպ. 121, վավ. 247ա, էջ 1ա:
76 ՄՄ ԿԴ, թղթպ. 121, վավ. 247բ, էջ 1ա:
77 ՄՄ ԿԴ, թղթպ. 44, վավ. 318:
78 ՄՄ ԿԴ, թղթպ. 116, վավ. 319, ՄՄ ԿԴ, թղթպ. 144, վավ. 54, ՄՄ ԿԴ, թղթպ. 150, վավ. 890, ՄՄ ԿԴ, թղթպ. 150, վավ. 891, ՄՄ ԿԴ, թղթպ. 151, վավ. 66, ՄՄ ԿԴ, թղթպ. 152, վավ. 164, ՄՄ ԿԴ, թղթպ. 155, վավ. 351, ՄՄ ԿԴ, թղթպ. 157, վավ. 488:

և սովորութային իրավունքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություններով: Այս դարաշրջանում մերձամուսնությունների հարցը շատ սուր էր դրված և հանրության մեջ ընկալվում էր երկակի ձևով՝ մի կողմից որպես ավանդույթ, մյուս կողմից որպես օրենքով արգելվող արարք: Այդ պատճառով ժամանակի համապարփակ նկարագիրը ստանալու համար կարևոր է իրավական, սոցիալական և սովորութային դրսևորումները մեկտեղել ու դիտարկել ամբողջության մեջ: Սկզբնաղբյուրներից քաղված վերոբերյալ տեղեկությունները, որ հնարավորինս ճշգրիտ են արտացոլում ժամանակի ամուսնաընտանեկան հարաբերությունների իրական պատկերը, կարող են առատ նյութ մատակարարել պատմական, ազգագրական, քաղաքացիական և եկեղեցական իրավունքների հետազոտությունների համար:

Վավերագրերը որպես իրական աղբյուրներ քննառելով, տեսնում ենք, որ 19-րդ բեկումնային դարում ժողովրդական սովորութային իրավունքը, կանոնական իրավունքն ու նոր կազմավորվող Քաղաքացիական օրենսգիրքը՝ իր համապատասխան հոդվածներով, անհաշտ պայքարի մեջ էին: Ամուսնական խնդիրների շուրջ այսպիսի քառսային իրավիճակ հիմնականում ստեղծում էին օրենքի անկատարությունն ու բազմանշանակ լինելը, նաև հոգևորականների կամայականությունները: Աշխարհականները բողոքում էին կանոնների անճշտությունից, անիրավահավասարությունից, հոգևորականների կաշառակերությունից: Հոգևորականները դժգոհում էին գործող օրենքների ոչ միօրինակությունից, հասարակության օրինազանցությունից ու տգիտությունից: Եվ երկու կողմն էլ իրավացի էր, ինչը դժվարություններ էր ստեղծում եկեղեցավարչական և եկեղեցադատական մարմինների համար: Օրենքի պահանջին յուրաքանչյուր անհամաձայնություն ըմբոստություն էր առաջացնում հանրության շրջանում, հասարակությունն ընդվզում էր և սկսում բողոքել՝ ընդհուպ մինչև բարձրագույն իշխանություն: Դիմում էին միջնորդների օգնությանը՝ որպես ծանրակշիռ փաստարկ բերելով հեղինակության պահպանումը, ֆինանսական աջակցությունը, սպառնում դավանափոխությամբ ու կրոնափոխությամբ: Նահապետական գերդաստանը հաճախ փորձում էր իր երիտասարդ անդամների ամուսնությունը ծառայեցնել շահավետ կապեր ստեղծելու կամ ֆինանսական ու ֆիզիկական օգուտ քաղելու համար՝ հաճախ հաշվի չառնելով մերձավոր ազգակցությունը: Նույնիսկ ժամանակի լուսավորյալ և կրթյալ ընտանիքներում էին տեղի ունենում անօրինական ամուսնություններ, ընդ որում՝ ամենաբարձր հովանավորչությամբ: Արդյունքում ամուսնությունների հարցում եկեղեցու դիրքորոշման և սովորութային պրակտիկայի հակադրությունը հանգեցնում էր սոցիալական կոնֆլիկտների, ինչպես նաև անձնական՝ ընտանեկան մակարդակով խնդիրների:

Պետության չգոյության պայմաններում այլևս հրամայական էր, որ եկեղեցին մշակեր և համայնքին խստագույնս պարտադրեր լիակատար, հստակ ու ճշգրիտ կանոններ՝ ինքն էլ չշեղվելով իր ընդունած վերջնական օրենքներից: Աշխարհիկ պատկան մարմինների վերահսկողությունն էլ հայ հասարակական կյանքում լրացուցիչ պարտավորություններ էր առաջ բերում: Եվ սկսեց աստիճանաբար ուրվագծվել ամուսնաընտանեկան փոփոխվող մի օրինակարգ. բազմադարյա ճանապարհ անցած ու օրենքի ուժ ստացած սովորութային կանոնները իրենց տեղը սկսեցին զիջել կանոնական իրավունքին, աշխարհիկ Քաղաքացիական օրենսգրքի պարտադրող հոդվածները եկան փոխարինելու ժողովրդական բազմաբովանդակ կենցաղին և այդ կենցաղը ձևավորող սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական և, իհարկե, բարոյական նորմերին: Հետզհետե հասարակությունը կամա թե ակամա սկսեց ենթարկվել գործող օրենքին, իսկ արդեն 20-րդ դարի սկզբներից գրագիտության տարածման շնորհիվ սկսեց բարձրանալ լայն խավերի գիտակցությունն ու բարոյական ընկալման համակարգը, ինչը հանգեցրեց մերձամուսնությունների զգալի նվազմանը:

NAIRA MARTIROSIAN

CONTRADICTIONS BETWEEN CANON LAW AND CUSTOMARY LAW REGARDING CLOSE-KIN MARRIAGES AMONG ARMENIANS IN THE 19TH CENTURY

Key words: Family relations, consanguineous marriage, 19th century, canon law, customary law, secular laws, blood relations, in-laws, godparents.

The article based on the documents of the Catholicos Archives of the Mashtots Matenadaran, highlights the problems caused by marriages between close consanguineous, in-law relatives and persons having godparental relationship in the 19th century. It shows how many illegal marriages were performed as a result of the imperfection of canon law and the widespread acceptance and application of customary rules. Due to the corruption of the clergy, illegal actions, and also the arbitrariness of the laity, numerous consanguineous marriages were registered, including those involving blood, in-law and godparental marriages. However, studies of the primary sources also prove that spiritual leaders, guided by the desire to keep the Christian people under the subordination of the Armenian Apostolic Church, as well as not to offend influential figures of Armenian descent, often conceded and permitted premature marriages. I. e. 200 years ago, customary law

predominated in the minds and lifestyle of the people. From two-century-old documents, we learn about the interactions between the canonical and customary laws of the time, and the impact they had on various manifestations of consanguineous marriages, as well as the changes the customary marriage law has undergone in the last two centuries.

НАИРА МАРТИРОСЯН

ПРОТИВОРЕЧИЕ МЕЖДУ КАНОНИЧЕСКИМ И ОБЫЧНЫМ ПРАВОМ ПО ПОВОДУ КРОВНОРОДСТВЕННОГО БРАКА У АРМЯН В XIX ВЕКЕ

Ключевые слова: Брачно-семейные отношения, инцестуальный брак, XIX век, каноническое право, обычное право, светские законы, кровные родственники, свойственники, крестные родители.

В статье, основанной на документах Католикосского Архива Матенадарана имени Маштоца, рассматриваются проблемы, вызванные кровнородственными браками, а также браками между свойственниками и крёстными детьми и родителями в XIX веке. Показано, сколько незаконных браков было заключено из-за несовершенства канонического права и широкого принятия и применения норм обычного права. Из-за коррумпированности и противоправных действий духовенства, а также произвола мирян регистрировались многочисленные противозаконные браки, в том числе кровнородственные, а также между лицами, связанными через свойство и по линии крестный-крестник. Изучение первоисточников также доказывает, что духовные лидеры, руководствуясь желанием удержать христианский народ в подчинении Армянской Апостольской Церкви и не оскорблять влиятельных деятелей армянского происхождения, часто допускали близкородственные браки. Утверждается, что 200 лет назад брачные социальные нормы ещё были тесно связаны с сознанием и образом жизни народа. Из документов двухсотлетней давности мы узнаем о взаимодействии канонического и обычного права, о том, какое влияние оно оказывало на различные проявления кровнородственных браков, а также о том, какие изменения претерпели брачные социальные нормы за последние два столетия.